


# ԲԱՆԿՈՐԾՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐՍ. ՄԻԽԱՅԼՈՎ

Գ Ն Ա

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՅՈՒԱԿՑՈՒԹՅԱՆ


ԴԱՄԱ



ԵՐԱ. ԱՐԴՅՈՒՆԱՎԻՐ


331.881

A 4500



# ԳՆԱ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ



ԲՈՅԱՐՉՈՎԻ ՀԱՐԻ-Ի

ԷՐԵՎԱՆ

1929

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐԱՎԱՐ  
ՊԱՏՎԵՐ 4226  
ԳՐԱԼԵՐԱԳՈՒՆՎԱՐ 2277 Բ.  
ՏԻՐԱԺ 4000

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ համարյա բոլոր ձեռնարկները (դործարաններն ու ֆաբրիկանները) և փոխադրության միջոցները՝ պատկանում են պետության, իսկ ամրող իշխանությունը գտնվում է բանվոր դաստիարակի ձեռքին, վորը և կառավարում և ամրող յերկիրը, հենվելով չքավոր դյուզացիության վրա և դաշնակինքների միջակի հետ։ Մնացած բոլոր յերկրներում բանվոր դաստիարակը դեռևս քաղաքական իշխանություն չի նվաճել, իշխանությունն այնտեղ գտնվում և կառիտապալիստների, խոշոր ձեռնարկատեր-բուրժուազիայի ձեռքին, վորը և տիրապետում և վողջ արդյունարկերությանը։

Յուրաքանչյուր բանվորի հասկանալի յև խորհըրդացին և կապիտալիստական ձեռնարկությունների առարկերությունը։ Կապիտալիստը նողատակ և դնում, վորդան կարելի յև շատ վաստակել յուր գործարանից իրեն սեփական կարիքների համար, նաև ձգտում և հարկադրել բանվորին վորքան կարելի յև շատ աշխատել, իսկ աշխատավայրեւ վորքան կարելի յև քիչ վճարել։ Մեղ մոտ դրությունն այլ և, վորովհետեւ բանվոր դառնարդը վճռական հաղթանակ և տարել հանդեպ բուրժուազիայի և ստեղծել և Խորհրդային իշխանություն, և այժմ ինքը կառավարում և զործարանները, ֆաբրիկանները, հանքերը, յերկաթուղթները, բանկերը—ժողովրդական վողջ տնտեսությունը։

Մեր գործարանները և Փարքիկանները ոգուտ են  
տալիս, բայց ո՞ւր և զնում այդ ոգուտը:

## ԻՆՉՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ԽՍՀՄ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ

Նրա նշանակալից մասն ոգտագործվում է ԽՍՀՄ  
ինդուստրացման համար, այսինքն՝ յերկրի արտադ-  
րական հղորության բարձրացման և ամրացման, նոր  
ելեկորոկայանների կառուցման, հների լայնացման,  
յերկաթուղինների և հանքահորերի կառուցման, ածուխ  
և մետաղ արտադրելու համար և վերջապես այնպիսի  
գործարանների կառուցման, վորոնց միջոցով պետք է  
արտադրվեն մեքենաներ և մշակման յենթարկվեն աշ-  
խատավորական կարիքներին անհրաժեշտ միջոցները:  
Յուրաքանչյուր նոր ձեռնարկություն հնարավորու-  
թյուն ե տալիս մեզ, քանակով ավելի և վորակով բարձր  
ու եժան ապրանքներ արտադրել, վորը պետք և բանվո-  
րի և դյուզացու համար: Մեր յուրաքանչյուր բանվորի  
համար պարզ ե, վոր հողուտ աշխատավորության ընդ-  
հանուր շահերի, խորհրդային ձեռնարկության ամեն  
մի բանվոր, ամեն մի մեքենա ավելի բարձր արտադրո-  
ղականություն պետք ե ունենա. չե՞ վոր մենք աշխա-  
տում ենք մեզ համար, և վոչ թե բուրժուազիայի: Բացի  
այդ, աշխատավորների շահերը պահանջում են, վոր-  
պեսզի մեր բոլոր ապրանքները և մթերքները լինեն վո-  
րակով բարձր և եժան: Պետական արդյունաբերությու-  
նից ստացված ոգուտն ամբողջապես չի դորժադրով միմիայն ինդուստրացման նպատակի համար. Նրա նը-  
շանավոր մասը գնում է բանվորների աշխատավարձի բարձրացմանը, իսկ մյուս մասը ծախսվում է աշխա-

առավորության կենցաղի բարեկարգմանը (վպրոցների, հիմանդանոցների, բանվորական ակումբների, ճաշարանների, մսուրների կառուցման) համար :

Այդ խոկ պատճառով Խորհրդային Միության յուրաքանչյուր բանվորը շահագրգոված է, վորպեսզի արդյունաբերությունը զարդանա ու ավելի մեծ ոգուածքիրի, խոկ արտադրանքը բարձր լինի և եժան :

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Խորհրդային Միության մեջ, ինչպես առվեց՝ իշխանությունը դատիվում և բանվոր դասակարգի ձեռքին : Յուրաքանչյուր բանվորի ակտիվ մասնակցության հնարավորությունը տնտեսական շինարարության մեջ, խոչոր չափով ապահովված է : Մասնակցելով խորհուրդների վերընտրություններին, բանվորը նաև առաջիկ և տալիս իր պատգամավորներին, թե ինչպես տնտեսությունը բարելավել : Էուլոր լրագրները, ամբողջ մամուլը, դանվում և բանվորի ձեռքին, այդ միջոցներով նա կարող է խորհուրդներ և ցուցմաններ տալ և ստանալ իրեն գործարանի թերությունների և նրանց վերացման միջոցների վերաբերյալ : Յուր արհեստական միության միջոցով նույնպես բանվորն սժանդակում և տնտեսության շինարարության դործին, վորովհետեւ Խորհրդային իշխանությունը իր բոլոր կարեռը ձեռնարկումներն անպայման ոնց և կացնում արհեստական միությունների մասնակցությամբ : Այդ խոկ պատճառով արհեստական միությունները կազմակերպել են արտադրա-

կան խորհրդակցություներ, վորապեսզի վորքան հնարա-  
վոր և լայն չափերով բանվորական մասսաներին ներ-  
դրավեն խորհրդային արդյունաբերության բարե-  
կարգման և կաղմակերպման գործի մեջ:

## ԻՆՉՈՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արտադրական խորհրդակցություն և կոչվում  
տվյալ գործարանի, ֆաբրիկայի կամ ցեխի այն  
ժողովը, վորտեղ քննության են առնվում բանվորնե-  
րի կողմից նկատված թերությունները և նրանց վե-  
րացման միջոցները:

Բանվորների մասնակցությունը՝ նման խորհրդա-  
կցություններում պարտադիր չեւ այդ կախված և  
բանվորի բարի ցանկությունից, վորով նա ոժանդա-  
կում և արտադրության գործին:

Բանվորն իրեն ձեռնարկում ականատես և մի շաբէ  
պակասությունների, սխալների, անդգուշության և  
նույնիսկ չարագործությունների: Արտադրության ժա-  
մանակ պատահում եւ, վոր տրվում են վոչ պիտանի  
գործիքներ, կամ մինչև կեսոր, նույնիսկ ամբողջ որը  
դազգյահը կանդ և առնում, վորովհետեւ կարդի չի դըց-  
ված, կամ աշխատանքի համար անպետք նյութեր են  
տրվում: Լինում են դեպքեր, յերբ զանազան պատճառ-  
ներով (հում և ոժանդակ նութերի վատ վորակի, կամ  
աշխատանքի հսկողության թուլության հետևանքով)  
ցեխում մեծ քանակությամբ վոչ պիտանի ասլրանք և  
արտադրվում: Սակայ չեն այնպիսի գեպքեր, յերբ  
զանազան պատճառներով վորակյալ աշխատավորի ժա-

մանակն իդուր տեղը կորչում ե , պատահում են դեպքեր , յերբ վարսետը փոխանակ բանվորին դործնական աշխատանքի—ողնություն և ցուցմունքներ տալու , ըդրազվում ե դատարկարանությամբ : Այս բոլորը հարցեր են , վորոնց հետ բաղխվում ե բանվորն իր ամենորյա աշխատանքների ընթացքում : Դրա հետ միասին , յեթև մենք ավելի ուշադրությամբ մոտենանք արդյունաբերությանը , կարելի կլինի ավելի խոշոր թերություններ նկատել : Որինակ՝ դազգյահների անկանոն պասավորությունը ցեխում , հում նյութի անվորակ լինելը և անժամանակ ստացումը , պատվերների սխալ կատարումը , ավելորդ վերադիր վճարների հետևանքով արտադրանքի արժեքի (գնի) բարձրացումը և այլն : Գործարաններում դոյցություն ունեցող թերություններից մենք այսուեղ նշեցինք միայն մի քանի որինակներ , սակայն իրականում այդ թերություններն ավելի շատ են և այդ մասին դիտեն թե՛ բանվորը , թե՛ ծառայողը և թե՛ վարպետը : Աշխատանքի ընթացքում բանվորի մեջ ծագում են մի շարք գործնական դիտողություններ և առաջարկություններ յուր գաղղրյահի , մեքենայի , ամրագի ցեխի և գործարանի վերաբերյալ , այդ պատճառով այն բանվորները , վորոնք ցանկանում են խոնել իրենց արտադրական գործերի մասին , վազորոք նշանակված որը աշխատանքն ավարտելուց հետո գումարում են արտադրական խորհրդակցություն : Յուրաքանչյաւր դիտակից բանվոր , վորը հետամուտ և յուր գործին և ցանկանում և ակտիվ կերպով մասնակցել խորհրդային տնտեսության կազմակերպման գործին , ուետք և ներկա լինի յուր ցեխի կամ գործարանի արտադրական խորհրդակցությանը :

Մեզ մոտ ներկայումս մի շաբք գործարաններում  
մտցրվում ե աշխատանքի կոնվեյերի (անընդհատ տե-  
լուղություն) ձեւ, այդ նշանակում ե, վոր յուրաքան-  
չյուր բանվոր անընդհատ մի հասարակ աշխատանք և  
կատարում (ոպերացիա), իսկ պատրաստվող առար-  
կան անդադար մեկից մյուսին և անցնում, վորովհետեւ  
բոլոր բանվորները կանոնած են հաջորդականությամբ  
և ըստ աշխատանքի ընթացքի, առարկան՝ մեկ բանվո-  
րից մյուսին արագությամբ հասցնելու համար, աշխա-  
տում են կոնվեյերները, այսինքն՝ այնպիսի շարժում մի-  
ջոց, վորը մեխանիքական ճանապարհով տեղափոխում  
է պատրաստվող առարկան։ Մտցնելով աշխատանքի  
նման կարդ, առանձնապես անհրաժեշտ ե, վորովեսդի  
գործարանում տմեն ինչ կանոնավոր և լավ դրված լի-  
նի, յեթե վորեւ տեղ առարկան կանգ և առնում, այդ  
դեպքում կոնվեյերի մոտ գործող բանվորների աշխա-  
տմանը դադարում ե։

Նման գործարաններում աղմինիստրացիան պետք և  
առանձին ուշադրությամբ ամեն բան նախապատրաս-  
տի, կարգի գցի և կաղմակերպի։ Այս դեպքում ևս բան-  
վորներն առանձնապես շահագրգուված են միասին քըն-  
նարկելու և կշռադատելու, թե ինչպես կաղմակերպել  
նման կոլեկտիվ, ընդհանուր աշխատանքը։

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐ-  
ՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յեթե արտադրական խորհրդակցությանը մաս-  
նակցում են մի ցեխի, կամ մի արհեստանոցի  
բանվորները, այդպիսի խորհրդակցությունը կոչ-  
վում և ցեխային, իսկ յեթե դրված են այն-

պիսի հարցեր, վորոնք վերաբերվում են մի քանի ցեխերի կամ ամբողջ գործարանին, այլ դեպքում հավաքվում են ավյալ գործարանի բոլոր բանվորները, այլպիսի արտադրական խորհրդակցությունը կոչվում է բնողհանուր գործարանային, իսկ խոշոր գործարաններում կոչվում են արտադրական կոմֆերենցիաներ: Խորհրդակցությունները պետք են զումարել վո՛չ սակայն քան յերկու ամիսը մեկ անգամ: Խորհրդակցության որվահ անդի մասին լայն կերպով հայտարարում են արտադրական հանձնաժողովը (վորի մասին կիսումի ստորե) զումարումից մի քանի որ առաջքատ վորում մատնանշվում է, թե խորհրդակցությունն ինչպիսի հարցեր են քննության առնելու: Խորհրդակցության ժամանակ, սովորաբար ամենից առաջ լսվում են զեկուցում, մի վորհեն արտադրական հարցի մասին զեկուցում են զեխի պետք, կամ գործարանի դիրեկտորը, կամ արտադրական հանձնաժողովի անդամներից մեկնումեկը են վերջապես շաբաթյին բանվորներից վորեն մեկը: Այդ զեկուցումներում լուսաբանվում են մեկ կամ յերկու խնդիր, վորն առանձնապես կարեուք և ավյալ ցեխի կամ գործարանի համար: Որինակ՝ զեկուցողը լուսաբանում են արտադրանքի վատարակ լինելու հարցը, վոչ պիտանի (ճրակ) արտադրանքի հարցը, նաև տեղեկություններ և հազարդում այն մասին, թե վորչափ վոչ պիտանի և վորչափ վորտակյալ արտադրանք և ունեցել գործարանը մի ամսվա կամ մի շաբաթվա ընթացքում ու այլպիսով գուրու բերելով վո՛չ պիտանիք միջին տոկոսը, բացատրում են թե ի՞նչ պատճառների հետեանքով նման դրություն գոյություն ունի: Արդյո՛ք մեքենաների և գործիքների անպետքության կամ

բանվորների, աղմինիստրացիայի, վարպետների անպարտածանաչության պատճառով դոյլություն ունեն նման թերություններ: Հայտնաբերելով բոլոր թերությունները, զեկուցողն արտահայտում ե իր կարծիքը այն մասին, թե ինչպիսի միջոցների պետք ե դիմել, վոչ ոլխանի արտադրանքը վերացնելու համար:

Զեկուցումը պետք ե լինի կարծ և բովանդակալից: Զեկուցումից հետո, խորհրդակցության մասնակցողները կարող են հարցեր տալ և պարզաբանել այն բոլորը՝ ինչ վոր անհասկանալի յե մնացել: Պարզաբանումից և հարցերի պատասխանից հետո, սկսովում ե մտքերի փոխանակությունը:

Արտահայտվողները նշում են այն հանգամանքը՝ թե արդյո՞ք զեկուցողը ճիշտ լուսաբանեց խնդիրը և գործնակա՞ն են նրա առաջարկներն ու խորհուրդները: Արտահայտվողներից ամեն մեկը պետք ե աշխատի իր մտքերը, վորքան հնարավոր և պարզ և հասկանալի ձեռք լուսաբանել, պետք ե խորանալ մինչեւ խնդրի արմատները, վորպեսզի յուրաքանչյուր բանվորի համար պարզվի, թե վո՞րտեղ ե չարիքը: Որինակ՝ յեթե քննվում ե ցեխում տեղի ունեցող դադարի հարցը, այդ դեպքում կարևոր ե պարզաբանել, թե վորքան ժամանակը ե կորչում բանվորների և մեքենաների աշխատանքից, դադարի հետեանքով: Այնուհետև պարզել, թե ինչո՞ւ յեն գաղաքաները տեղի ունենում: Արդյո՞ք թափառումների կամ գաղգրահների փչացածության, անկանոն նորոգումների, պահետ և գործիքանոց զնալու պատճառով ժամանակը կորչում ե և այլն: Այդ բոլորից հետո, պետք ե նշել գաղաքաների վերացման ամենապարզ միջոցները: Բոլոր առաջարկությունների

և հարցերի վերաբերյալ՝ աղմինիստրացիան պետք է արտահայտի իր կարծիքը, վորից հետո քվեարկվում և արձանագրվում են բոլոր առաջարկությունները, վորպես այլայլ ցեխի կամ գործարանի բանվորության կարենիքը:

### ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՔ Ե ՊԱՏՐԱՍՏՎԵԼ

Արտադրական խորհրդակցությունում գործնական և ահզին առաջարկներ անելու և իզուր տեղը չխոսելու համար անհրաժեշտ և վորպեսզի յուրաքանչյուր բանվոր վաղորոք ծանոթանա խորհրդակցության որակարգի հետ՝ որինակ՝ յերբ նա տեղյակ և թե խորհրդակցությունը քննելու յի դադդյանների վերանորոգման, կամ չափով գործիքների, կոնվեյերի և այլն աշխատանքային հարցերը, այդ դեպքում բանվորը լավ մտածում և ծանր ու թեթև և անում այդ հարցերը, նայած թե ի՞նչպես և դրված գործը, ի՞նչն և անկանոն դրված և ինչպես կարելի յի ողնել այդ թերություններն արմատախիլ անելու, գրա համար անհրաժեշտ և վորպեսզի նա առաջին հերթին իրեն աշխատանքի դադդյանի և վերստատկայի մասին մտածի և մտահոգված, ուշադիր բանվորը կարող և չառ հետաքրքրական և կարեւոր հանգամանքներ պարզել, որինակ՝ նա ստուգելով թե ի՞նչպես և դասավորված իր աշխատանքի տեղը, ի՞նչպես են զետեղված գործիքները, աշխատանքի համար ի՞նչ և հարկավոր նրան՝ նա ամեն անգամ կտեսնի և կհամոզվի, վոր խառնիճաղանճ դրության պատճառով տեղի յի ունենում ժամանակի և աշխատանքի վատնում ուստի պետք և մտահոգվել թե, ի՞նչպես դասավորել, վորպեսզի այլելի նպաստավոր հարմարություն

և հնարավորություն ստեղծվի ավելի արագ աշխատելու համար։ Կարեռը և նաև աշխատանքի պայմանների ստուգումը, դուցե ավելի հարմար և աշխատել կանգնած քան թե նստած, դուցե լույսը վատ ե, վերստակը բարձր կամ ցածր և և այն։ Բանվորը պետք և մտածի և այն մասին, թե արդյո՞ք նա ճիշտ և ոգտագործում իր գործիքը, պետք և նայել, դիտել հարեան բանվորին, համեմատության աւնել և հարց տալ, արդյո՞ք աշխատանքը հաջող և ընթանում թե վոչ և ինչպես բարելավել այն։

### ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԸ ՓՈՔՐ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆ Ե

Հենց այստեղից ել միտք և հզանում՝ որինակ դագդյանին կից մի վորեե ձեռնուու հարմարություն ստեղծել, զործիքի կոթունն ավելի լավ պատրաստել, փոխել աշխատանքի կարգը և այն, այսպիսով յերբ բանվորն իր ըլջապատում, իր գագգահի վրա թեկուզ փոքրիկ բարելավում-գյուտ և անում, նրա միտքն ինքնըստինքյան ավելի հեռուն և մզում այդ։ Կատարված այդ փոփոխություններից հետո բանվորն ստուգում և, հաշվառման յենթարկում, հաճախ և գրի յե առում իր դիտողություններն ու համեմատում և թե վորքանով աշխատանքը բարելավեց, և յեթե պարզվեց, վոր փոփոխություններից հետո աշխատանքը հեշտանում և, արտադրանքը բարձրանում և, ուրեմն այդ ամենի մասին պետք և տեղյակ դարձնել արտադրական խորհրդակցությանը։ Գյուտարարությունը մատչելի յե ամեն մի գործարար բանվորի համար։ առհասարակ նման առաջադրություններն իրա-

գործելու համար առանձին մեծ ծախքեր չեն պահանջվում, սակայն այս կամ այն բարեփոխությունը գյուտը վորքան ել վոր հասարակ և պարզ լինի, այսուտմենայնիվ անհրաժեշտ և կամ դյուտի կաղապարը կամ գծադրությունը կազմել, այդ նըսպատակով ել դործարաններում և ֆաբրիկաներում կազմակերպվում են հատուկ տեխնիքական կոնսուլտացիաներ, (խորհրդածություններ), վորոնք ցուցմունքներ են առաջիս բանվորին դժադրություններ անելու: Այսուղ, ուր նման կոնսուլտացիաներ դեռևս չկան, այդ գեղքում բանվորին ողնության և գալիս դործարանային վարչությունը: Բանվորների այն առաջարկությունները և դյուտերը, վորոնք գործադրվում են արտադրության մեջ, անտեսում և ոգուտ են բերում գործարանին, այդպիսի դյուտարար բանվորները պարզեցարվում են: Զեռնարկությունների վարչություններն ունեն հատուկ ֆոնդեր, վորոնք գտնվում են գործարկութիւնի և ազմինիստարացիայի կողմից կազմված հանձնաժողովի տրամադրության տակ: Այդ հանձնաժողովներն եքաղերտ են կոչվում, վորոնք քննություններ առաջարկությունների պարզեցարման չափը:

## ՍԻԱԼ ԹԵՔՈՒՄՆԵՐՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Անհրաժեշտ և լավ հիշել, վոր արտադրական խորհրդակցությունների հիմնական խնդիրն եւ հայտարերել զործարանների արտադրական տընտեսական թերությունները և բացերը, ուսումնասիրել նրանց պատճառները և ընդգծել այդ բացերի վերացման միջոցները: Այսինչ վորոշ խորհրդակցու-

թյումներում քննության են դրվում արտադրության բարելավմանը չվերաբերող հարցեր . որինակ՝ տարի-ֆային , դնահատու , աշխ . պաշտպանության , նույնիսկ կուլտուրլուսավորական հարցեր . նման ինդիբների քննութամբ արտադրական խորհրդակցությունները չը պետք ե զբաղվեն , վորովհետեւ այդալիսով բանվորի ու շադրությունը հեռանում ե հիմնական հարցից՝ արտադրական աշխատանքից , իսկ յեթե խորհրդակցություններում նման ինդիբներն առաջ են դալիս , անհրաժեշտ ե առանց քննության որակարգից հանել և աալ ցեխարհմիությունը , ցեխլիազորին կամ գործարկումին :

Արտադրական խորհրդակցությունների մյուս սը-խալ դիմն այն ե , յերբ նրանք զբաղվում են բացառապես ցեխային սահմանափակ գործերով . իհարկե հարկավոր ե լույլ ե աշխատանքն սկսել առանձին ցեխերի և դաղգյահների աշխատանքների բարելավման վերաբերող հարցերի քննությունից , սակայն անհրաժեշտ ե՝ աստիճանաբար անցնել ավելի բարդ և ընդհանուր հարցերի քննությանը , վորոնք ամբողջապես վերաբերում են գործարանին , այնուհետեւ ամբողջ տրեստին՝ վորի մեջ մտնում ե տվյալ գործարանը և ի վերջու բանվորները չեն կարող չհետաքրքրվել վորդ արգյունաքերության դարգացման և նրա ամրապնդման հարցերով :

## ԽՈՐՀՄԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՈՏԵՑՆՈՒՄ ԵՆ ԻՐԱՐՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՑԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Բանվորը հաճախ նկատում է , վոր յեթե աշխատանքը լավ չի ընթանում , ապա այդ մենակ իրենից չի կախված , այլ և իրեն հո-

բեան բանվորից , վարպետից և ամբողջ գործի դրվածքից , և ահա մասնակցելով արտադրական խորհրդակցություններին նա ըմբռնում և և սովորում գործարանի ամբողջ մեխանիզմը և նպաստում և նրա (դործարանի) բարենորոգմանը , իսկ դրանից մեծ ոգուտ և ստացվում չե՞ն վոր ամենազործնական ճարտարապետը և նույնիսկ նա , ով վարում և ամբողջ գործարանը կամ ֆաբրիկան , հաճախ նա և լ չդիտե այն մանրամասնությունները , վորոնք սակայն հայտնի յեն փորձառու բանվորին . դրա հետ միասին բանվորը՝ նույնիսկ ամենավորակյալ բանվորը՝ չպիտե այն ամենը , ինչ վոր հայտնի յե ճարտարապետին , վորն ավարտել և բարձրագույն տեխնիքական դպրոց : Արտադրական խորհրդակցությունն և ահա , վորը ծառայում և մասնագետներին և բանվորներին իրար մոռեցնելու լավագույն միջոցը , այսուեղ նըրանք բաժանում են իրենց և փորձառությունը և գիտելիքները , ու ընդհանուր ուժերով հայտաբերում են արտադրության թերությունները , շտկում են այն և բարելավումներ մտցնում . մի խոսքով բարձրացնում են մեր խորհրդային արդյունաբերությունը :

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՃՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ, ԱՌԱՋՔԱՇՈՒՄԸ

Խորհրդային . արդյունաբերության մեջ թե բանվորական մասսան և թե աղմինիսարացիան , հանդիսանում են սոցիալիստական շինարարության միենույն Փրոնտի , ընդհանուր գործի մարտիկները . չպետք և մոռանալ , վոր մեր գործարանների աղմինիսարացիայի , դերեկառըների և վարպետների մի մասն առաջ են քաշվել հենց նույն բանվորներից և նշա-

Նակվել են աղմինիստրատիվ կամ տնտեսական ղեկավար  
աշխատանքի, Խորհրդային Խշանության կողմից :  
Յուրաքանչյուր բանվոր պետք ե սովորի կառավարել  
պետությունը և այդ պատճառով ել ժող. տնտեսու-  
թյուններում առաջ են քաշվում բանվորական մասսանե-  
րից նրանք, վորոնք պրակտիկ աշխատանքներում ցույց  
են տվել, վոր իրենք ընդունակ են և կարող են վարել  
վոչ միայն իրենց դազգյահն, այլև ավելի պատասխա-  
նառու աշխատանք : Մեր արդյունաբերությունն այժմ  
անցնում ե նոր ռելիերով, լայն կերպով կիրառվում ե  
ոացիոնալացումը, վորը նշանակում ե՝ բարելավել  
արդյունաբերության վողջ դրվածքը, այդ պատճառով  
զատվում են ըստ առանձին մասերի բոլոր աշխատանք-  
ները, կիրառվում ե կոնվեյերը, դործադրության մեջ են  
առնվում կատարելագործված մեքենաներ ձեռքի ծանր  
աշխատանքն՝ ուր հնարավոր ե՝ փոխարինվում ե մեքե-  
նաներով, կիրառվում ե արտադրանքի պարբերական  
ստուգում վերջինիս մշակության պրոցեսում, հիմնա-  
դրվում են հատուկ լաբարատորիաներ, վոր-  
պեսզի ավելի պրակտիկ գործադրվի գիտու-  
թյունն արդյունաբերության սպասարկման տեսա-  
կետից . այդ բոլորին զուգընթաց կը ճանա-  
պատճեն ե բանվորական որը և մենք մեր գործարան-  
ներում և ֆաբրիկաներում անցնում ենք 7-ժամյա բան-  
վորական որվան : Բոլոր այդ բարեփոխությունները  
կենսագործելու համար պահանջվում ե լավ պատրաստ-  
ված, ստորին և միջին աղմինիստրատիվ պերսոնալ :  
Արինակ՝ նոր ձեռքով աշխատելու գեպօպամ պահանջ-  
վում են մեծ քանակությամբ վարպետներ՝ վորպեսդի  
հետևեն մեքենաներին, պահանջվում են հրահանդիչներ՝

բանվորներին ցուցմունքներ տալու և ողնելու համար, վորակյալ անձինք՝ վորպիսղի տեղն ու տեղը ստուգեն վոչ պիտանի արտադրանքը, գործիք պատրաստողներ՝ լավ գործիքներ և հարմարություններ ստեղծելու համար, զաղղյահ սարքավորող մասնագետներ և այլն: Ասո՞ր բաղկաց ճարել այդ մարդկանց. իհարկե բանվորական մասսաների շարքերից, այն բանվորներից, վորոնք իրենց ցուցյ են տվել աշխատանքի ժամանակ, և ապացուցել են իրենց պիտանիությունն արտադրության համար, կիրառելով ձեռնուու միջոցներ և դյուտեր, վորոնք ակտիվ կիրապով մասնակցել են արտադրական խորհրդակցություններին: Այսպիսով արտադրական խորհրդակցությունների հիմնական խնդիրներից մեկն ել ավելի ընդունակ բանվորների հայտարերումն ու առաջքաշումն և ագմինիստրատիվ-տեխնիքական պաշտոններում:

## Խ'ՆՉ Ե ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Ինչպես տեսանք արտադրական խորհրդակցության աշխատանքը բավականին խոչոր և լուրջ: Արտադրական խորհրդակցությունը ղեկավարելու համար գործարկումին կից ստեղծվում է հատուկ հանձնաժողով, վորը և կոչվում է արտադրական հանձնաժողով, նրա անվիքների մեջ և մանում նախապատրաստել և դռւմարել արտադրական խորհրդակցությունները, մշակել քննության գրվելիք հարցերը և այդ հարցերի վերաբերյալ կանխարես կազմել գործնական առաջադրությունները:

Խորհրդակցությունից հետո արտադրական հանձնաժողովը գործարկումի միջոցով փոխադրում է գործարանային վարչություն խորհրդակցության բոլոր վորոշումները և սահմանում է այդ վորոշումների կե-

բառման ժամկետներ ու հետեվում և վորակեսղի վորա-  
շումները ճշտիվ և արտադությամբ կենսագործվեն  
կյանքում :

Առանձին արտադրական պրակտիկ խնդիրներն ա-  
վելի հիմնովին մշակելու նպատակով, արտադրական  
հանձնաժողովներին կից կարելի յե կաղմակերպել փոք-  
րիկ յենթահանձնաժողովներ, վորոնք դրազվում են  
որինակ՝ աշխատանքի դադարի, ինքնարժեքի իջեցման,  
բանվորական ուժի նույտակահարմար ուղարկործման  
հարցերով։ Զ'ալետք և թույլ տալ միայն, վոր այդ յեն-  
թահանձնաժողովները վերածվեն մշտական հանձնա-  
ժողովի, վորովհետեւ նման դեպքում բանվորական  
վողջ մասսայի մասնակցությունն արտադրության գոր-  
ծում կջլատվի ու կ'թուլանա :

### ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Արտադրական խորհրդակցություններից և ժողով-  
ներից զատ մի շարք խոչը գործարաններին և ֆաբրի-  
կաններին կից զոյտություն ունեն ժամանակավոր վերա-  
հսկիչ հանձնաժողովներ։ Նրանց անելիքն ե՝ բանվորա-  
կան մասսային մասնակից դարձնել և ավելի մոտեցնել  
տնտեսության կարգավորման հարցերին։ Այդ հանձնա-  
ժողովներն ընտրվում են կոմ բանվորական ընդհանուր  
ժողովում, կամ դործարանային արտադրական կոնֆե-  
րենցիայում։ Բնարեւով այդ հանձնաժողովները նրանց  
հակազ և արգում, թե ինչո՞վ դրազվել, վո՞ր խնդիրն ու-  
սումնական է, ավագան արտադրական ձեռնարկի գործու-  
նեյության վո՞ր կողմի վրա բնիվեռել ուշադրությունը։

Ժամ։ վ. հանձնաժողովներին հանձնարարվում և  
որինակ՝ արտադրության ինքնարժեքի իջեցման, կամ  
զոչ պիտանի արտադրանքի դեմ պայքարելու, կամ թե չ:

Հանձնարարվում նրանց զբաղվելու ուղղակի տվյալ  
դործարանի մի վորյեվն կարեվոր ցեխի գործունեյու-  
թյամբ : Վ . Հանձնաժողովները բաղմակողմանիորեն  
ուսումնասուիրում են իրենց հանձնարարված խնդիրները ,  
մանրամասն հետազոտում են աղմինիստրացիայի աշ-  
խառանքները , պարզում են բոլոր թերությունները ,  
ըստ վորում վ . Հանձնաժողովն իր կատարած հետազո-  
տություններին մասնակից և դարձնում բանվորական  
լայն շերտերին և արտադրական խորհրդակցությանը :  
Վ . Հանձնաժողովների հիմնական խնդիրներից մեկն ել  
արտադրական խորհրդակցությունների գործունեյու-  
թյան ամրապնդումն և ու ստուգումը , մասնավորակես  
խորհրդակցությունների այն առաջարկների իրավուրծ-  
ման , վորոնք արվել են աղմինիստրացիային : Գետք է հի-  
շաաակել , վոր արտադրական խորհրդակցությունների  
վորոշումներն աղմինիստրացիայի համար պարտադիր  
չեն , բայց զործի ճիշտ կազմակերպման և վերջինիս  
մասնակցության դեպքում , խորհրդակցությունների  
վորոշումները մտածված և գործնական են լինում . նը-  
ման դեպքում ընդունված վորոշումները կյանքում կի-  
րապործվեն , խոկ յեթե աղմինիստրացիան համաձայն  
չե խորհրդակցության այս կամ այն վորոշմանը , այդ  
գեղքում նա պարտավոր և տալ մտածված և պատճա-  
ռարանված բացատրություն , թե ինչու՞ նա չի կարող  
կամ չի ուզում ընդունել բանվորների առաջարկը :


### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱ- ԿԱՐԳԻ ՇԱՀԵՐԸ

Այս բոլորից մենք անսանք , թէ վորպիսի խոշոր  
ովուած են քերում արտադրական խորհրդակցություն-  
ները յուրաքանչյուր ձեռնարկի և մեր վաղջ ժողովրդա-

կան տնտեսության համար . վորքան ել , վոր լավ լինի վործարանային վարչությունը , վորքան ել վոր վորձ-ված լինեն գործարանի ճարտարապետ—տեխնիկների ուժերը՝ ելի ամեն ինչ նախատեսել չեն կարող : Մեր արտադրությանն ողնության և գալիս հազարավոր և միլիոնավոր բանվորների միաձույլ փորձը : Արտադրական խորհրդակցություններում բանվորների տված մի քանի հազար առաջարկությունները իրազործվել են կյանքում և տվել են շատ մեծ տնտեսումներ մեր արդյունաբերությանը , հետեւվարար և խորհրդային հանրապետության վողջ բանվոր դասակարգի համար :

Բանվորների և արհեստակցական միությունների անելիքն ե՝ ավելի լայն ծավալել և բարելավել խորհրդակցությունների աշխատանքը , ոպտագործելով այս կամ այն գործարանի հաջող փորձը մյուս գործարանների արտադրության բարելավման համար : Արտագրության կազմակերպման մեջ առանց բանվորական լայն մասսաների մասնակցության անհնարին կլիներ խորհրդային արդյունաբերությունը դնել այն բարձրության վրա , վոր կա ներկայումս : Խոկ դրան զուգընթաց ամեն մի բանվոր պետք ե հիշի , վոր իր աշխատավարձը , նյութական կացությունը , իր կուլտուրական պահանջների բավարարությունն անքակտելի կերպով կապված են մեր սոցիալիստական արդյունաբերության զարգացման հեռանկարների հետ : Յուրաքանչյուր բանվորի առաջնակարգ և կարեվորագույն անելիքն ե՝ ամեն կերպ ուժողակելի մեր տնտեսության շինարարությանը , խոկ դրա համար նա պետք ե արտադրական խորհրդակցության մշտական մասնակիցը լինի : Յուրաքանչյուր գիտակից աշխատակից վոչ միայն ինքն անպայման պետք ե հաճախի արտադրական խորհրդակցություն , այլև նա ջերմեռանդ կոչ պետք ե ուղղի մնացած այն բանվորներին , վորոնք դեռ լիսվին չեն գիտակցել այդ գործի նշանակությունը :

**ԴՆՍ. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ :**



ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0039092

[064]

A I  
4500

ԳԻՆԸ 7 ԿՈՊ.